ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ 35 ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ «ՓԱՍՏԱԲԱՆ ԵԶԵԳԵԼՅԱՆ» ԹՈՇԱԿ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ մասի 15-րդ կետի, և Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության 17.3 կետի 27-րդ ենթակետի պահանջներով,

հաշվի առնելով այն, որ ՀՀ փաստաբանների պալատի պատվավոր անդամ, բարերար, Ֆրանսիայի Հանրապետության քաղաքացի Ռայմոն Եզեգելյանը պատրաստակամություն է հայտնել ՀՀ փաստաբանների պալատի նախագահի կողմից սահմանած կարգով որոշված Երևան քաղաքի 35 (երեսունհինգ) փաստաբանների մեկ տարվա անդամավճարները կանխավճարի կարգով վճարել,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

– ***Հաստատել «Երևան քաղաքի 35 փաստաբանների «Փաստաբան Եզեգելյան» թոշակ տրամադրելու մասին» կարգը՝ համաձայն հավելվածի:***

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝ Արա Զոհրաբյան

18 հունվարի 2016թ.
թիվ 08-Լ
ք. Երևան